

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ՏԱՐԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

2022 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓԱԳԻՐ	3
ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ.....	3
ՄԱՍ 1. 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ.....	10
ՄԱՍ 2. ՌԻՍԿԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	12
ՄԱՍ 3. ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	19
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....	23

ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Սույն տարեկան հաղորդումը ներկայացվում է՝ ի կատարումն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 198-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, ինչպես նաև «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի ա) ենթակետի և 28-րդ հոդվածի պահանջների: Այն պատրաստվել է՝ առաջնորդվելով Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) ստանդարտներով:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ

Հաշվեքննիչ պալատը 2022 թվականի գործունեության ծրագրի շրջանակներում իրականացրել է 54 հաշվեքննություն, որից 40-ը՝ Հաշվեքննիչ պալատի 2022 թվականի գործունեության ծրագրի առաջին մասի շրջանակներում (2022 թվականի պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննություններ), 11-ը՝ գործունեության ծրագրի երկրորդ մասի՝ ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանությամբ հաստատված հաշվեքննությունների շրջանակներում, իսկ 3-ը՝ գործունեության ծրագրի երրորդ մասի՝ միջազգային պայմանագրերով նախատեսված համատեղ միջոցառումների շրջանակներում:

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով Հաշվեքննիչ պալատը 2022 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ ամենամյա եզրակացությունը կազմելու նպատակով իրականացրել է թվով 40 հաշվեքննություն 10 բյուջետային հատկացումների ստորադաս կարգադրիչի կողմից իրականացվող բյուջետային ծրագրերի նկատմամբ:

Քանի որ ՀՀ Սահմանադրության և «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՀ պետական բյուջեի կատարման նկատմամբ հաշվեքննությունների արդյունքներն ամփոփող հաշվետու տարվա եզրակացությունը, որպես ինքնուրույն փաստաթուղթ, ներկայացվում է ՀՀ Ազգային ժողովին և հրապարակվում է Հաշվեքննիչ պալատի www.armsai.am կայքում առանձին ժամանակացույցով, սույն տարեկան հաղորդումը այն չի ներառում: Միաժամանակ, «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով՝ սույն տարեկան հաղորդման Մաս 1-ում ներառված է 2021 թվականի պետական բյուջեի կատարողականի հաշվեքննության վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:

ՌԻՍԿԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվեքննիչ պալատի 2022 թվականի գործունեության ծրագրի երկրորդ մասի շրջանակներում (ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանությամբ) նախատեսված 18 հաշվեքննությունից 11-ն ավարտվել է, 3-ը կասեցվել է, 1-ը ուժը կորցրած է ճանաչվել, իսկ մնացած 3-ը դեռևս շարունակվում են, ուստի «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքով 2022 թվականի գործունեության ծրագրից 3 ծրագրային կետ տեղափոխվել է 2023 թվականի գործունեության ծրագիր (տեղափոխված, կասեցված և ուժը կորցրած ծրագրային կետերի ցանկը՝ Հավելված 1.-ում):

Հաշվեքննության շրջանակ: Հաշվետու տարում Հաշվեքննիչ պալատի հաշվեքննության շրջանակը ներառել է օրինականության, տնտեսման, ինչպես նաև ծախսային և նպատակային արդյունավետության առումով ռիսկային և առավել նշանակալի ոլորտներ՝ հաշվի առնելով Հաշվեքննիչ պալատի ռեսուրսները:

Հրապարակված հաշվեքննություններ: Իրականացված 11 հաշվեքննության արդյունքներով Հաշվեքննիչ պալատի կողմից հաստատված ընթացիկ եզրակացությունները օրենսդրությամբ սահմանված ժամկետում ներկայացվել են Ազգային ժողով, Կառավարություն և համապատասխան հաշվեքննության օբյեկտներին, որոնցից 10-ը, «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հրապարակվել են Հաշվեքննիչ պալատի պաշտոնական www.armsai.am և ՀՀ հրապարակային ծանուցումների www.azdarar.am ինտերնետային կայքերում (հրապարակված հաշվեքննությունների ամփոփ արդյունքները ներկայացված են սույն հաղորդման Մաս 2-ում):

2022 թվականին հաշվեքննություն էր իրականացվել նաև «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից ՀՀ պետական բյուջե որպես նվիրաբերություն փոխանցված միջոցների օգտագործման նկատմամբ, որի արդյունքները պետական գաղտնիք պարունակելու հիմքով չէին հրապարակվել: ՀՀ կառավարության կողմից «Որպես նվիրաբերություն գումար ընդունելու մասին» ՀՀ կառավարության մի շարք որոշումների գաղտնազերծման հանգամանքով պայմանավորված՝ ՀՀ հաշվեքննիչ պալատը 2023 թվականի մարտի 21-ի թիվ 43-Ա որոշմամբ հրապարակել է նշված հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությունը:

Պետական գաղտնիք պարունակող հաշվեքննություններ: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է հաշվեքննություն ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունում սպառազինության և ռազմական տեխնիկայի ձեռքբերման, ինչպես նաև դրանց առանձին հանգույցների և սարքավորումների՝ ձեռքբերման, արդիականացման, վերականգնման, նոր նմուշների մշակման և արտադրությանն ուղղված գործունեության նկատմամբ, որի արդյունքները պետական գաղտնիք պարունակելու հիմքով չեն հրապարակվում: Նշված հաշվեքննության

արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացության հասանելիությունը կարգավորվում է «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով:

ՀՀ Ազգային ժողովի հետ համագործակցություն: Հաշվետու ժամանակահատվածում Հաշվեքննիչ պալատի հաշվեքննությունների արդյունքները, դրանց հանրային նշանակությունից կախված, քննարկման առարկա են դարձել ՀՀ Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի և կոնկրետ հաշվեքննության թեմայի գլխադասային մշտական հանձնաժողովի հրավիրած համատեղ նիստերում: Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովն ակտիվորեն ներգրավված է եղել Հաշվեքննիչ պալատի գործունեության իրավական բարելավման միջոցառումների իրականացման գործընթացում:

Իրավապահ մարմինների հետ համագործակցություն: Հաշվետու տարում ՀՀ գլխավոր դատախազություն ուղարկված նյութերի և Հաշվեքննիչ պալատի հրապարակած հաշվեքննությունների արդյունքների շրջանակներում 6 առանձին ուղղություններով նախաձեռնվել է քրեական վարույթ, և կատարվում է նախաքննություն, իսկ առանձին ուղղություններով ուսումնասիրությունները շարունակվում են:

Հաշվետու ժամանակահատվածում «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի հիմքով, ՀՀ հաշվեքննիչ պալատի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազություն են ուղարկվել՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեում իրականացված հաշվեքննության ընթացքում առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող արարքների վերաբերյալ նյութերը:

Նախորդ տարիների հաշվեքննություններով հաշվետու տարում ընթացքում գտնվող քրեական վարույթներով պետությանը պատճառված վնասի չափը կազմում է 834,941 հազ. դրամ, կատարվում է նախաքննություն:

Իրավապահ մարմինների հետ հաշվետու տարվա համագործակցության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հաղորդման Հավելված 2.-ում:

Հաշվեքննության կարծիքներ և եզրակացություններ: Հաշվետու ժամանակահատվածում Հաշվեքննիչ պալատի տարեկան ծրագրի 2-րդ մասում ներառված կետերի համար կիրառվել են հաշվեքննության «ֆինանսական», «համապատասխանության» և «կատարողականի» տեսակները, երկու հաշվեքննության դեպքում՝ համակցվել են ֆինանսական և համապատասխանության հաշվեքննությունները, որոնց վիճակագրությունը ներկայացվում է ստորև:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝

Ֆինանսական և համապատասխանության	2
Համապատասխանության	3
Կատարողականի	5

Հաշվեքննության առաջադրանքներն իրականացնելիս հաշվեքննողները կիրառել են հաշվեքննության համար նախատեսված բոլոր ընթացակարգերը:

Գործող օրենսդրության համաձայն՝ ֆինանսական և համապատասխանության հաշվեքննությունների արդյունքներով Հաշվեքննիչ պալատը ներկայացնում է հաշվեքննության կարծիքների հետևյալ տեսակները.

- դրական եզրահանգում, եթե ստացվել է բավարար տեղեկատվություն հաշվեքննություն իրականացնելու համար, և էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել,
- ոչ լիարժեք եզրահանգում, եթե հայտնաբերվել են էական խեղաթյուրումներ, դրանց հետևանքները համատարած չեն, և հաշվետվություններն էականորեն խեղաթյուրված են, կամ հայտնաբերվել են էական խեղաթյուրումներ, դրանց հետևանքները համատարած չեն, և անհնար է ստանալ բավարար տեղեկատվություն հաշվեքննություն իրականացնելու համար,
- բացասական եզրահանգում, եթե հայտնաբերվել են էական խեղաթյուրումներ, դրանց հետևանքները համատարած են, և հաշվետվություններն էականորեն խեղաթյուրված են,
- հրաժարում եզրահանգում ներկայացնելուց, եթե հայտնաբերվել են էական խեղաթյուրումներ, դրանց հետևանքները համատարած են, և անհնար է ստանալ բավարար տեղեկատվություն հաշվեքննություն իրականացնելու համար:

Հաշվետու ժամանակահատվածում տրամադրված հաշվեքննության կարծիքների վիճակագրությունը հետևյալն է.

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Դրական եզրահանգում	4
Ոչ լիարժեք եզրահանգում	1

¹ Վիճակագրության մեջ ներառված չէ պետական գաղտնիք պարունակող հաշվեքննության տվյալները

Բացասական եզրահանգում	0
Հրաժարում եզրահանգում ներկայացնելուց	0

Հաշվեքննիչ պալատը կատարողականի հաշվեքննություններով ներկայացնում է կատարողականի հաշվեքննության սկզբունքների պահպանման վերաբերյալ հաշվետվություններ: Կատարողականի հաշվեքննության սկզբունքներն են՝

- տնտեսումը, որով գնահատվում է, թե ինչքանով են նվազագույնի հասցվել նախատեսված (ձեռք բերվող) ռեսուրսներին ուղղված ծախսերը՝ սահմանված ժամկետի, որակի, քանակի, ծավալի պահպանմամբ և համարժեք հատուցմամբ.
- նպատակային արդյունավետությունը (օգտավետություն), որով գնահատվում են սահմանված նպատակների իրականացումը և պլանավորված արդյունքների ստացումը.
- ծախսային արդյունավետությունը (արդյունավետություն), որով գնահատվում է նախատեսված ռեսուրսների օգտագործմամբ համապատասխան որակով, քանակով և ժամկետում առավելագույն արդյունքների ստացումը:

2022 թվականի կատարողականի հաշվեքննության հաշվետվություններում ներկայացված կատարողականի հաշվեքննության սկզբունքների չպահպանման ամփոփիչ դեպքերը ներկայացված են ստորև.

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԻ ԶՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԴԵՊՔԵՐ

Տնտեսման	1
Նպատակային արդյունավետության	2
Ծախսային արդյունավետության	2

Հաշվեքննությամբ ներկայացված առաջարկություններ: Բացահայտված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների և ռիսկեր պարունակող դեպքերի վերացման և կանխարգելման, ինչպես նաև գործընթացների արդյունավետության բարձրացման համար ՀՀ կառավարություն, հաշվեքննության և ստուգման օբյեկտներ, ինչպես նաև շահագրգիռ այլ մարմիններ ներկայացվել է ընդհանուր թվով 66 առաջարկություն, որը բնութագրական հատկանիշներով կարելի է բաժանել երեք տեսակի.

- համակարգին միտված առաջարկություններ, որոնք նպատակ են հետապնդում բարձրացնելու կառավարման, ֆինանսական, իրավական համակարգերի գործունեության արդյունավետությունը,

- արդյունքին միտված առաջարկություններ, որոնք նպատակ են հետապնդում բարելավելու ծրագրերը և ծառայությունները նպատակներին և ակնկալվող արդյունքներին հասնելու համար,
- խնդրին (խնդիրների բացահայտմանը և լուծմանը) միտված առաջարկություններ, որոնց նպատակը հաշվեքննության արդյունքում բացահայտված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերացումն է կամ շտկումը, ինչպես նաև տնտեսման, ծախսային և նպատակային սկզբունքների չպահպանման հետ կապված խնդիրների լուծումը:

Հաշվեքննությունների արդյունքում ներկայացված առաջարկությունների վիճակագրությունը հետևյալն է.

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համակարգին միտված	25
Արդյունքին միտված	23
Խնդրին միտված	18

Հաշվեքննության գործիքակազմ: Տարեկան հաղորդման մեջ ներկայացված բոլոր հաշվեքննությունների ընթացիկ եզրակացությունները կազմվել են՝ հիմք ընդունելով հաշվեքննության ընթացքում հաշվեքննողների կողմից կազմված հաշվեքննության (ստուգման) արդյունքների վերաբերյալ արձանագրությունները: Դրանք, համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի, ամբողջությամբ ներկայացվել են հաշվեքննության (ստուգման) օբյեկտների ղեկավարներին: Վերջիններիս կողմից ներկայացվել են առարկություններ և բացատրություններ: Առարկությունները որոշ դեպքերում իրենց բնույթով եղել են մեկնաբանություններ և բացատրություններ արձանագրված փաստերի վերաբերյալ: Օրենքով սահմանված ժամկետներում հաշվեքննության օբյեկտների կողմից առարկությունների ու բացատրությունների տրամադրված չլինելու դեպքերում վերջիններս հաշվի են առնվել հաշվեքննությունների արդյունքներն ամփոփող ընթացիկ եզրակացությունները մշակելիս:

Հաշվեքննողների գործողությունները հաշվեքննության (ստուգման) օբյեկտների կողմից չեն բողոքարկվել: Հաշվեքննության ընթացքում հաշվեքննողները ղեկավարվել են հաշվեքննության իրականացման համար «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, միաժամանակ, կիրառելով Բարձրագույն հաշվեքննիչ մարմինների միջազգային ստանդարտներով նախատեսված հաշվեքննության գիտելիքներ: Հաշվեքննությունների ողջ գործընթացը, համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ

օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի պահանջների, հաշվեքննողների կողմից փաստաթղթավորվել է: Հաշվեքննության արդյունքները մշակվել են անաչառ և համակողմանի տեղեկատվության և փաստերի հիման վրա: Տրված բոլոր գնահատականները հիմնված են պատշաճ ապացույցների վրա: Հաշվեքննիչ պալատն իր գործունեության ընթացքում հետևել է օրենքով սահմանած գործունեության սկզբունքներին: Հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացությունները և դրանց հիման վրա մշակված սույն հաղորդումը հաշվեքննությունների արդյունքներով բացահայտված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերաբերյալ որևէ որակում, ինչպես նաև դրանց հետևանքների առնչությամբ որևէ կանխատեսում չեն պարունակում:

ՄԱՍ 1. 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2022 թվականին Հաշվեքննիչ պալատը հաշվեքննել է 2021 թվականի պետական բյուջեի կատարումը՝ պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման ֆինանսական և համապատասխանության հաշվեքննությունների իրականացման միջոցով: Հաշվեքննությունների արդյունքների հիման վրա Հաշվեքննիչ պալատը պատրաստել է 2021 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացություն՝ տալով հաշվեքննության կարծիք:


«Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ» ՀՀ հաշվեքննիչ պալատի եզրակացությունը հաստատվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի 2022 թվականի մայիսի 26-ի թիվ 138-Ա որոշմամբ: Հաշվեքննիչ պալատը եզրակացությունը մշակել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված մեխանիզմով՝ հիմնվելով եռամսյակային հաշվեքննությունների արդյունքների վրա: Մասնավորապես, 2021 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացության կազմման նպատակով Հաշվեքննիչ պալատն իրականացրել է թվով 72 հաշվեքննություն 18 գերատեսչությունում: Հաշվեքննությունների արդյունքներն ամփոփված են ընթացիկ եզրակացություններում, որոնք օրենքով սահմանված կարգով ներկայացվել են ՀՀ Ազգային ժողովին, ՀՀ կառավարությանը, հաշվեքննության օբյեկտներին, ինչպես նաև հրապարակվել Հաշվեքննիչ պալատի պաշտոնական կայքում (բացառությամբ օրենքով սահմանված գաղտնիք հանդիսացող տեղեկություններ պարունակող 8 ընթացիկ եզրակացությունների):

Վերոնշյալ 18 գերատեսչություններում իրականացված հաշվեքննությունների արդյունքում 13-ում արձանագրվել են 138 անհամապատասխանություններ: Միևնույն ժամանակ, 6 գերատեսչությունում արձանագրվել է 26 խեղաթյուրում, որի ընդհանուր գումարը կազմել է 2,651.9 մլն դրամ կամ հաշվեքննված գերատեսչությունների փաստացի տարեկան ծախսի 0.15%-ը:

Արձանագրված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է 2021 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունում, ինչպես նաև երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննությունների ընթացիկ եզրակացություններում, որոնք հրապարակված են Հաշվեքննիչ պալատի պաշտոնական կայքում՝ բացառությամբ օրենքով սահմանված գաղտնիք պարունակող ընթացիկ եզրակացությունների: ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննությունների արդյունքում ներկայացվել է թվով 66 առաջարկություն 12 գերատեսչությունների վերաբերյալ:

Հաշվեքննիչ պալատի կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացրել ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի

մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեությունը:
Ըստ այդմ՝ Հաշվեքննիչ պալատը ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի կատարման
վերաբերյալ արտահայտել է **դրական եզրահանգում**:

<p>Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ ՀՀ հաշվեքննիչ պալատի եզրակացություն</p>	<p>Հղում</p>
	

ՄԱՍ 2. ՌԻՍԿԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննիչ պալատի 2022 թվականի գործունեության ծրագրի 2-րդ մասով իրականացված հաշվեքննությունների բոլոր մանրամասները ներկայացված են Հաշվեքննիչ պալատի պաշտոնական կայքում հրապարակված ընթացիկ եզրակացություններում: Սույն մասում արտացոլված է հաշվեքննությունների հիմնական արդյունքներից օրինակներ, իսկ ընթացիկ եզրակացությունների վերաբերյալ համառոտ ամփոփագրերը ներկայացված են Հավելված 3-ում:

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

1. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում (այսուհետև՝ ՏԿԵՆ) Կովկասյան էլեկտրահաղորդման ցանցի վարկային և դրամաշնորհային ծրագրերի (այսուհետև՝ Ծրագրի) նկատմամբ կատարողականի հաշվեքննությամբ արձանագրվել է.

Ծախսային արդյունավետության սկզբունքի չպահպանման օրինակներ

- Ծրագրի իրականացման ընթացքում առաջացել է 823,320.86 հազ. դրամ պարտավորավճար և վարկի մասհանման վերջնաժամկետի երկարաձգման համար 173,675.7 հազ. դրամ հատուցման վճար:
- Խորհրդատվական պայմանագրի փոփոխություններով լրացուցիչ հատուցումներ են նախատեսվել համապատասխանաբար՝ 400 հազ. եվրո և 526.3 հազ. եվրո չափով, իսկ ծրագրի արժեքը թանկացել է 43.2 տոկոսով՝ 101 մլն եվրոյով:

Նպատակային արդյունավետության սկզբունքի չպահպանման օրինակներ

- Գնման գործընթացի մասով.
Ծրագրի նպատակին հասնելու հարցում անորոշությունը ՀՀ էներգետիկ անվտանգության ապահովման տեսանկյունից ռիսկեր է ստեղծում: Ծրագրի մեկնարկը՝ գլխավոր կապալառուների մրցույթի հայտարարումը, մրցույթային փաթեթները նախատրակավորված հայտատուներին տրամադրում, չի տրվել:
- ՏԿԵՆ-ի և «ԲԷՑ» ՓԲԸ-ի միջև հաղորդակցության մասով.
ՏԿԵՆ-ում գործող կառավարման խորհուրդը ամիսը մեկ անգամ նիստեր չգումարելով, ընթացիկ իրավիճակի մասին բավարար տեղեկատվություն չստանալով, չի պահանջել, չի ստացել, չի քննարկել և չի վերհանել առաջընթացի բացակայության պատճառները, ինչպես նաև չի իրականացվել ծրագրի մոնիտորինգ:

➤ Ծրագրի իրականացման վրա «ԲԷՑ» ՓԲԸ-ի ֆինանսական վիճակի ազդեցության մասով.

«ԲԷՑ» ՓԲԸ-ն չունի ծրագրի, որպես ներդրման, արդյունավետության գնահատման որևէ ընթացակարգ: Ըստ էության ծրագրի մասով ծախսերի առանձնացված հաշվառում չվարելը և ներդրումներից ակնկալվող եկամուտների գնահատումներ չիրականացնելը ապագա հատուցումների մասով անորոշություն է առաջացնում, որը հնարավորություն չի տալիս գնահատելու ծրագրի չափելի ազդեցությունը «ԲԷՑ» ՓԲԸ-ի ֆինանսական վիճակի վրա:

2. ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունում անտառօգտագործման գործընթացի նկատմամբ կատարողականի հաշվեքննությամբ արձանագրվել է.

Ծախսային արդյունավետության սկզբունքի չպահպանման օրինակ

➤ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից կնքված թվով 9 վարձակալության պայմանագրերում պետական սեփականություն հանդիսացող անտառների վարձավճարների օրենսդրությամբ սահմանված նվազագույն չափը չպահպանելու արդյունքում, հաշվեքննողների հաշվարկներով, անտառտնտեսության թվով 5 մասնաճյուղերում ընդհանուր վարձակալված 36,7հա անտառային հողատարածքներից 2019-2020թթ. ժամանակահատվածում 14,086.5 հազ. դրամի վարձավճարներ չեն գանձվել :

Տնտեսման սկզբունքի չպահպանման օրինակներ

- «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 2019-2020թթ. ապրանքների և ծառայությունների ձեռքբերման ու պլանավորման միջև առկա է էական տարբերություն, դրանք չեն կատարվել գնումների ոլորտում ներդրված հսկողական մեխանիզմների շրջանակներում: Բացակայում է մրցակցության առկայության հանգամանքը, որի պայմաններում ձեռք բերված ապրանքների ու ծառայությունների դիմաց ծախսերը չեն հիմնավորվել որպես նվազագույն:
- Բացակայում են ՊՈԱԿ-ի «Մեկ անձից գնում» գնման ընթացակարգի համաձայն կատարված գործողությունների և դրանց հիմքերի վերաբերյալ գնումների ոլորտի օրենսդրությամբ սահմանված էլեկտրոնային փաստաթղթերը:
- 2019-2020թթ. ընթացքում փաստացի մատուցվել են ծառայություններ, որոնց գործընթացները պետք է կատարվեին գնումների վերաբերյալ իրավական նորմատիվ ակտերով սահմանված կարգով:

3. ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունում (այսուհետև՝ ԲՏԱՆ) ՀՀ թվայնացման (թվային փոխակերման) գործընթացի նկատմամբ կատարողականի հաշվեքննությամբ արձանագրվել է.

Նպատակային արդյունավետության սկզբունքի չպահպանման օրինակներ

➤ Կիրեռանվտանգության ապահովման մասով.

ՀՀ-ում առկա չէ կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքների սահմանում, բացակայում են դրանց բացահայտման չափանիշները, և չկա ազգային ռեգիստր, որի պայմաններում հնարավոր չէ կիրառել ԿՏԵ-ների պաշտպանության ինստիտուցիոնալ կառուցակարգեր: Չի իրականացվել Կիրեռանվտանգության ազգային կենտրոնի ստեղծման ռազմավարական միջոցառումը, որը, պետք է հանդիսանար պետական համակարգերի կիրեռանվտանգության գրավականը, ապահովեր անձնական տվյալների պաշտպանությունը և խթաներ կիրեռագրագիտության զարգացումը: Տեղայնացված և հաստատված չեն կիրեռանվտանգության ոլորտի ստանդարտները, մշակված չեն ազգային կիրեռչարունակականության պլաններ: Չեն իրականացվել կիրեռանվտանգության վարժանքներ, առկա չեն նաև կիրեռ-պատահարների պարտադիր ազդարարման պահանջներ կամ իրական ժամանակում կիրեռ-պատահարների գրանցման դեպքում դրանց մասին տեղեկատվության ինքնաշխատ ստացման ու մշտադիտարկման տեխնիկական կարողություններ:

➤ Մարդկային ռեսուրսների կառավարման մասով.

ՀՀ պետական մարմիններում թվայնացման ոլորտի որակավորված մասնագետներով ապահովվածության, ինչպես նաև թվային գիտելիքների ու հմտությունների առնչությամբ մարդկային ռեսուրսների կարողությունների կարիքի գնահատումներ և դրանց հիման վրա կազմված կրթական պլաններ առկա չեն: Սահմանված չեն թվային անձնակազմի որակավորման նվազագույն պահանջներ, ինչպես նաև առկա չեն միասնական մեխանիզմներ՝ բոլոր մարմիններից ներկայացուցիչների ներգրավմամբ՝ թվայնացմանն առնչվող նախագծերի համընդհանուր քննարկումների, ռիսկերի բացահայտման, փոխգործակցության ապահովման, փորձի փոխանակման նկատառումներով:

➤ Թվայնացման ռազմավարության համապարփակության մասով.

ՀՀ թվայնացման ռազմավարությունում բացակայում են տնտեսության և հանրային կառավարման առանձին ճյուղերում թվային փոխակերպումների իրականացման միջոցառումները, ժամանակացույցն ու կատարողները: Փոխարենը՝ առանձին գերատեսչությունների կողմից մշակվել և իրականացվում են թվայնացմանն ուղղված ոլորտային ռազմավարական միջոցառումներ և նախաձեռնություններ:

➤ Ռազմավարության կատարողականի մասով.

Թվայնացման ռազմավարությամբ նախատեսվել է հաշվեքննությունն ընդգրկող ժամանակահատվածում իրականացնել թվով 10 միջոցառում, որոնցից որևէ մեկը սահմանված ժամկետներում լիարժեք չի կատարվել:

➤ Բյուջետավորման մասով.

Թվային փոխակերպման ռազմավարական նպատակին հասնելուն ուղղված պետության քաղաքականության իրագործման միջոցառումների տրամաբանական խմբավորում հանդիսացող բյուջետային ծրագիր առկա չէ: ՀՀ պետական բյուջեի «1043 - ԲՏԱ էկոհամակարգի, թվայնացման և շուկայի զարգացման» ծրագիրն առավելապես բաղկացած է ԲՏԱՆ-ի կողմից իրականացվող միջոցառումներից, որոնք չեն բովանդակում թվային փոխակերպման նպատակի իրագործմանը միտված պետության միջամտությունների ողջ սպեկտրը: Թվային փոխակերպմանն առնչվող բյուջետային մի շարք միջոցառումների պատասխանատու են հանդիսանում նաև ԲՏԱՆ-ից տարբերվող այլ գերատեսչություններ:

4. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում Ճանապարհային ցանցի բարելավման դրամաշնորհային և վարկային ծրագրերի նկատմամբ համապատասխանության հաշվեքննությամբ արձանագրվել է.

Անհամապատասխանության օրինակներ

➤ Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի վերականգնման և բարելավման ծրագրի շրջանակում կատարված 19,356,173.9 հազ. դրամ գումարի կապիտալ ծախսումները չեն ավելացվել ասֆալտբետոնյա ճանապարհների հաշվեկշռային արժեքին՝ չապահովելով ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 725-Ն հրամանով հաստատված «ՀՀ հանրային հատվածի հաշապահական հաշվառման ստանդարտի» պահանջի կատարումը:

➤ Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի վերականգնման և բարելավման ծրագրի և Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման լրացուցիչ ծրագրի շրջանակներում 6,171,153.56 հազ. դրամի 1187299քմ ասֆալտբետոնյա ծածկույթի վերին շերտի աշխատանքներն ընդունվել և վճարվել են առանց ավտոմոբիլի անիվի կառչումը ծածկից կամ ծածկի անողորկությունը (խորդուբորդությունը) ստուգելու, որը այդ աշխատանքներն ընդունելու համար ՀՀՇՆ IV-11.05.02-99-ով սահմանված պահանջ է:

Եվրոպական ներդրումային քանկի աջակցությամբ իրականացվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի վերականգնման և բարելավման ծրագրի մասով.

➤ Փոփոխության հրահանգներով 4,427,124.50 հազ. դրամի 22 անվանում աշխատանքների քանակները փոփոխվել են ավելի քան 25%-ով և դրա արդյունքում պայմանագրային գինը փոփոխվել է ավելի քան 1%-ով, սակայն Ծրագրի ղեկավարի կողմից գնի վերանայում չի կատարվել և նոր գին չի կիրառվել, այնինչ՝ համաձայն պայմանագրերի Ծրագրի ղեկավարը պետք է վերանայեր դրույքաչափը կամ գինը: Օրինակ, առանց գնի վերանայման, պայմանագրային գներով նվազեցվել են 29126քմ մետաղական ցանցերի համակարգով քարաթափոցներից պաշտպանության աշխատանքներ՝ ընդամենը 447,837.60 հազ. դրամով այն դեպքում, երբ այդ աշխատանքների նախահաշվային արժեքը կազմել է 1,525,549.20 հազ. դրամ:

➤ Համաձայն ՀՀՇՆ IV-11.05.02-99-ի (ավտոմոբիլային ճանապարհներ) 8.14 կետի պահանջի ճանապարհային պատվածքի ծակոտկեն (խոշորահատիկ) ասֆալտբետոնե շերտի բարձրությունը պետք է նշանակվի հաշվարկով, սակայն՝ ոչ պակաս 8սմ-ից, մինչդեռ նախագծերով և պայմանագրերով նախատեսվել ու ամսական կատարողականներով հաշվարկվել և վճարվել են 242,790 ք.մ. 5սմ հաստությամբ խոշորահատիկ ասֆալտբետոնե շերտի կառուցման աշխատանքներ 1,389,942.90 հազ. դրամի գումարով:

➤ Փոփոխությունների արդյունքում կատարողականներով հաշվարկվել և Ծրագրի միջոցներից 1,195,638.91 հազ. դրամ վճարվել են ճանապարհի օտարման և (կամ) պաշտպանական գոտում գտնվող BEELINE-ի, ROSTELECOM-ի, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի, «ՀԵԿ» ՓԲԸ-ի և Թուֆենկյան հանգստի գոտուն պատկանող հաղորդակցուղիների տեղափոխման և վերաշինման աշխատանքներ, այնինչ՝ համաձայն «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի ճանապարհի վերակառուցման կամ նորոգման դեպքում հաղորդակցուղիները պետք է տեղափոխվեն կամ վերաշինվեն դրանց սեփականատիրոջ հաշվին:

➤ Առանց հաշվարկի, հիմք ընդունելով տեխնիկական վերահսկողության խմբի ղեկավարի փորձը և նյութերի հատկությունների բարելավման նպատակով, սկզբնական նախագծով և պայմանագրով նախատեսված 8սմ հաստությամբ սև խճի փոխարեն իրականացվել է 242,938 ք.մ. 8սմ հաստությամբ բիտումով կայունացված խճավազային խառնուրդի շերտի կարուցման աշխատանքներ գումարով 1,130,311.04 հազ. դրամի, այնինչ համաձայն ՀՀՇՆ IV-11.05.02-99-ի ճանապարհային պատվածքի կոնստրուկտիվ շերտերի բարձրությունը պետք է նշանակվի հաշվարկով: Բացի այդ, համաձայն Խորհրդատուի տված մասնագիտական եզրակացության, նշված փոփոխությունը պատվածքի ամրության վրա չի ազդել, այսինքն հատկությունների որևէ բարելավում տեղի չի ունեցել, սակայն փոփոխության արդյունքում պայմանագրային գինը ավելացվել է 101,920.68

հազ. դրամով: Ընդ որում փոփոխության արդյունքում պայմանագրային գինը ավելացվել է 101,920.68 հազ. դրամով այն դեպքում, երբ նախահաշվային արժեքներով լրացուցիչ կատարված աշխատանքները ոչ թե թանկ են փոխարինված (չկատարված) աշխատանքներից այլ ընդհակառակը 277,766.54 հազ. դրամով ավելի էժան են փոխարինված (չկատարված) աշխատանքներից:

➤ Աշխատանքների իրականացման ընթացքում կատարված փոփոխությունների արդյունքում էականորեն փոփոխվել են աշխատանքների ծավալներն և անվանումները: Առանձին պայմանագրով ընդամենը 22% աշխատանքներն է որ չեն փոփոխվել: Երկու Լոտերի շրջանակում, եթե ի սկզբանե 12,617,203.00 հազ. դրամ նախահաշվային արժեքներով աշխատանքների կատարման համար կնքվել էին 11,007,122.30 հազ. դրամի պայմանագրեր կամ նախահաշվային արժեքներից 1,610,080.70 հազ. դրամով էժան, ապա շինարարության ընթացքում կատարվել են այնպիսի փոփոխություններ և նոր կատարվող աշխատանքների համար սահմանվել են այնպիսի գներ, որ վերջնական պայմանագրային գները և հաշվարկված կատարողականների գումարը ոչ թե էժան են այդ աշխատանքների սահմանված կարգով հաշվարկի դեպքում ստացվող նախահաշվային արժեքներից, այլ 1,543,033.63 հազ. դրամով գերազանցում են այդ նախահաշվային արժեքը:

5. Ծաղկաձորի համայնքապետարանի ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ ֆինանսական և համապատասխանության հաշվեքննությամբ արձանագրվել է.

Անհամապատասխանության օրինակներ

➤ Մի շարք պայմանագրեր կնքվել են չպահպանելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-N որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշման համապատասխան պահանջները: Մասնավորապես, կնքված պայմանագրերի մի մասում որպես պարտադիր պահանջ չեն նախատեսվել երաշխիքային ժամկետներ, որոշ պայմանագրերով ի սկզբանե սահմանված ժամկետները երկարաձգվել են վերը նշված որոշմամբ սահմանված պահանջներին ոչ համապատասխան, ինչպես նաև երկարաձգված ժամկետների մասով գնման փաթեթներում առկա չեն պայմանագրի կողմի դիմումները, որոնք ժամկետների երկարաձգման գործընթացի սկզբնավորման հիմք են հանդիսանում:

➤ Համայնքի ավագանու կողմից ընդունված մի շարք որոշումներում բացակայում են «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ

հողվածի 1-ին մասի 21-րդ կետով սահմանված դրույթների պահանջները (բացակայում են համայնքային սեփականություն համարվող հողամասի օտարման ժամկետները և նպատակը):

➤ Մի շարք դեպքերում չեն պահպանվել ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի N 388-Ն որոշման «Անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի ու դրանց գնահատումների (վերագնահատումների) վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմիններին տեղեկություններ ներկայացնելու կարգը սահմանելու և ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 22-ի N 641-Ն և 2007 թվականի ապրիլի 19-ի N 465-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշմամբ սահմանված կարգի 4-րդ կետի պահանջները, մասնավորապես՝ որոշ հողամասերի օտարման իրավունքի պետական գրանցում ստանալուց հետո հողամասերի մակերեսներն ու արժեքները չեն ներառվել գույքահարկի պարտավորությունների տեղեկատվական ավտոմատացված համակարգում, որի արդյունքում չի հաշվարկվել համապատասխան գույքահարկը:

➤ Մի շարք դեպքերում չի պահպանվել «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ սահմանված պահանջը: Մասնավորապես, համայնքի ղեկավարի կողմից մինչև 200 թ.մ. հասարակական նշանակության կառույցների համար 30 օրյա ժամկետում չի ընդունվել օրինականացման կամ մերժման մասին որոշում:

➤ Չեն պահպանվել «Աղբահանության և սանիտարական մաքրման» մասին ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասի և 13-րդ հոդվածի պահանջները: Մասնավորապես, համայնքի ավագանին չի հաստատել համայնքի սանիտարական մաքրմանը վերաբերող ամբողջական սխեման և համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները իրականացվել են առանց օրենքով նախատեսված սանիտարական մաքրման սխեմայի:

ՄԱՍ 3. ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՌՈՒԴԻՏԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննիչ պալատն իր գործունեությունը կազմակերպում է հերթական և արտահերթ նիստերի միջոցով: Հաշվետու ժամանակահատվածում Հաշվեքննիչ պալատն անցկացրել է 23 նիստ, որոնցից 11-ն՝ արտահերթ: Հաշվեքննիչ պալատի բոլոր նիստերի օրակարգերն օրենքով սահմանված կարգով նիստից երկու օր առաջ ուղարկվել են Ազգային ժողով և Կառավարություն: Նույն ժամանակահատվածում Հաշվեքննիչ պալատի կողմից ընդունվել է 269 որոշում, որից՝ 221-ն առնչվում է հաշվեքննության գործընթացին, 17-ը՝ Հաշվեքննիչ պալատի գործունեության մեթոդական և իրավական ապահովմանը, 6-ը՝ անձնակազմի կառավարման հարցերին, 25-ը՝ ֆինանսատնտեսական գործունեությանը:

Հաշվեքննիչ պալատի նիստերում կայացված որոշումները (բացառությամբ անհատական կամ գաղտնիք պարունակող իրավական ակտերի, հաշվեքննության և ստուգման առաջադրանքների) երեք աշխատանքային օրվա ընթացքում հրապարակվել են Հաշվեքննիչ պալատի www.armsai.am պաշտոնական կայքում:

Կայքում հրապարակված բովանդակությունը համառոտ ներկայացված է ստորև.

2022թ. պաշտոնական կայքում հրապարակված նյութերի վերաբերյալ	
Բովանդակություն	Հրապարակումների թիվ
Հաշվեքննիչ պալատի որոշումներ	129
Հաշվեքննիչ պալատի նիստերի վերաբերյալ տեղեկատվության հրապարակում	20
Միջազգային հարթակներ և համագործակցություն	9
Թափուր աշխատատեղերի/փորձագետների ներգրավման հայտարարություններ	5
Այլ տեղեկատվություն	8

Հաշվետու ժամանակահատվածում զանգվածային լրատվամիջոցները լրսաբանել են Հաշվեքննիչ պալատի մամուլի հաղորդագրությունները և հաշվեքննության արդյունքները: Հաշվեքննիչ պալատը էլեկտրոնային լրատվամիջոցների կողմից հիշատակվել է ավելի քան 2,399 անգամ²:

² Աղբյուրը՝ Rumorsmonitoring.com

Հաշվետու ժամանակահատվածում Հաշվեքննիչ պալատում հաստիքների առավելագույն քանակը 155-ն էր, որից 20 հաստիք՝ թափուր: Հաշվեքննիչ պալատի մարդկային ռեսուրսների վերաբերյալ որոշ տվյալներ ներկայացված են ստորև բերված աղյուսակներում.

Աշխատակիցների տարիքային խմբերը

Աշխատակիցների տարիքային խմբեր	Քանակ	Տոկոս
30-ից երիտասարդ	8	5.9%
30-40 տարեկան	31	23%
40-50 տարեկան	42	31.1%
50-60 տարեկան	39	28.9%
60-ից մեծ	15	11.1%
15 տարի և ավելի պետական ծառայության աշխատանքային ստաժ ունեցողներ	75	55.6%
Միջին տարիք	47	

Սեռային խմբերը

Սեռ	%
Իգական	23
Արական	77

Աշխատակիցների շարժը

Աշխատակիցների ընդհանուր շարժ (ընդամենը)	33
պետական ծառայության հաստիքներում աշխատակիցների շարժ	21
<i>պերական ծառայությունից ազատված</i>	17
<i>պերական ծառայության ընդունված</i>	4
պայմանագրային աշխատակիցների շարժ	12

Աշխատակիցների որակավորման բարձրացման շրջանակը

Վերապատրաստման ծրագրեր	Մասնակիցներ
Պետական ծառայության /քաղաքացիական ծառայության վերապատրաստումներ	43
Կատարողականի հաշվեքննության ստանդարտների հիման վրա աշխատակիցների վերապատրաստում (Շվեդիայի ազգային աուդիտի գրասենյակի աջակցությամբ)	23
Աուդիտորի որակավորման դասընթաց. «Ֆինանսական հաշվառման հիմունքներ» (UNDP-ի աջակցությամբ)	9


Աուդիտորի որակավորման դասընթաց. «Իրավագիտության հիմունքներ» (UNDP-ի աջակցությամբ)	25
Աուդիտորի որակավորման դասընթաց. «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում» (UNDP-ի աջակցությամբ)	26
Տվյալների վերլուծության դասընթաց (UNDP-ի աջակցությամբ)	7

2022 թվականին Հաշվեքննիչ պալատի պահպանման նպատակով օգտագործվել է շուրջ 968.2 մլն դրամ, որը կազմում է ճշտված պլանի 95.56%-ը: Հաշվեքննիչ պալատի պահուստային ֆոնդի գծով նախատեսված 17.6 մլն դրամն օգտագործվել է 100%-ով: Սոցիալական փաթեթների ապահովման նպատակով օգտագործվել է 9.3 մլն դրամ՝ կազմելով 87.3%-ը:

Համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի՝ 2022 թվականին Հաշվեքննիչ պալատի 2021 թվականի ֆինանսական հաշվետվությունները ենթարկվել են արտաքին աուդիտի՝ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից մրցութային ընթացակարգով ընտրված արտաքին աուդիտորական կազմակերպության կողմից: Վերջինս տրամադրել է հետևյալ աուդիտորական կարծիքը.


Հաշվեքննիչ պալատի ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով պատրաստված են համաձայն ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտի:

Սույն աուդիտորական եզրակացությունը հրապարակված է Հաշվեքննիչ պալատի պաշտոնական կայքում:

<p>ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021թ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական եզրակացություն</p>	Հղում
	

2022 թվականի ֆինանսական հաշվետվությունները նույն ընթացակարգով 2023 թվականին կենթարկվեն արտաքին աուդիտի, որի ավարտվելուն պես Հաշվեքննիչ պալատը պաշտոնական կայքում կհրապարակի աուդիտի եզրակացությունը:

Հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրի կազմման համար հիմք հանդիսացող ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանության հիման վրա հաշվետու տարում մշակվել և Հաշվեքննիչ պալատի կողմից հաստատվել են Հաշվեքննիչ պալատի 2023 թվականի գործունեության ծրագիրը, ինչպես նաև գործունեության ծրագրի ծրագրային կետերի ընտրության հիմնավորումը, որոնք հրապարակված են Հաշվեքննիչ պալատի պաշտոնական կայքում:

<p>ՀՀ հաշվեքննիչ պալատի 2023 թվականի գործունեության ծրագիրը և ծրագրային կետերի ընտրության հիմնավորումը</p>	Հղում
	

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Հաշվեքննիչ պալատի 2020-2023 թվականների ռազմավարական զարգացման ծրագրով ամրագրված 4 հիմնական ռազմավարական նպատակներն են.

1. իրավական դաշտի բարելավում,
2. հաշվեքննության ազդեցության բարելավում,
3. մասնագիտական կարողության և հաշվեքննության հմտությունների արդիականացում,
4. հաղորդակցման և համագործակցության ուղիների հզորացում:

Վերնոշյալ նպատակների իրականացման շրջանակներում նախատեսված էր հասնել 13 ենթանպատակների, որոնց իրագործման համար պլանավորված էր 2021թ.-ից մինչև 2023թ.-ն իրականացնել թվով 68 միջոցառում:

Հաշվետու ժամանակահատվածում ռազմավարական զարգացման ծրագրի նպատակներում և ենթանպատակներում փոփոխություններ չեն եղել: 2022թ. թվականի ընթացքում արտաքին գործընկերների աջակցությամբ և ակտիվ ներգրավմամբ ամբողջությամբ իրականացվել է տարեկան ծրագրով պլանավորված 10 միջոցառումից թվով 8 միջոցառում, իսկ 2 միջոցառում նախատեսվում է ավարտին հասցնել 2023թ. ընթացքում:

«Հաշվեքննիչ պալատի 2020-2023 թվականների ռազմավարական զարգացման ծրագիրն ապահովող՝ 2022 թվականի միջոցառումների պլան»-ի համաձայն՝ ՀՀ հաշվեքննիչ պալատն արտաքին գործընկերների՝ միջազգային կազմակերպությունների և բարձրագույն հաշվեքննիչ մարմինների հետ սերտ համագործակցությամբ իրականացրել է հետևյալ միջոցառումները.

- INTOSAI ստանդարտներին համապատասխան կատարողականի հաշվեքննության նոր մեթոդաբանության մշակում և հաստատում,
- Կատարողականի հաշվեքննության նոր մեթոդաբանության հիման վրա աշխատակիցների վերապատրաստում,
- Ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանության կատարելագործում,
- Գործունեության ծրագրում կատարողականի աուդիտի ծածկույթի մեծացում,
- Որակի կառավարման համակարգի (այդ թվում՝ հաշվեքննության, ֆինանսական, հսկողության և կառավարչական գործընթացների հետ կապված

որակի ապահովման) գործառույթի իրականացման մեթոդաբանության մշակում և հաստատում,

- Էթիկայի կանոնների սկզբունքների և կիրառման վերապատրաստման նյութերի մշակում,
- Էթիկայի կանոնների գործնական կիրառման մշտադիտարկման կարգի մշակում և հաստատում,
- Հաղորդակցության ռազմավարության նախագծի մշակում:

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

ՀՀ հաշվեքննիչ պալատը, հաշվի առնելով ՀՀ հաշվեքննիչ պալատի գործունեության անցած փուլի արդյունքները, արտաքին պետական հաշվեքննության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունները և արտաքին գործընկերների INTOSAI ստանդարտների նկատմամբ գնահատման զեկույցների առաջարկությունները, ինչպես նաև նպատակ ունենալով բարձրացնել ՀՀ արտաքին պետական հաշվեքննության իրավակարգավորումների համապատասխանության աստիճանը ոլորտին վերաբերելի հիմնարար փաստաթղթերով առաջարկվող՝ ժամանակի և տարածության մեջ փորձարկված լուծումներին, 2022 թվականին հաստատել է «ՀՀ արտաքին պետական հաշվեքննության ոլորտի իրավական բարելավումների հայեցակարգ»: Հայեցակարգի հիման վրա հրավիրված իրավախորհրդատուների աջակցությամբ Հաշվեքննիչ պալատի մասնագետների կողմից մշակվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթ, որն ուղարկվել է արտաքին և ներքին շահագրգիռ կողմերին: Շահագրգիռ կողմերից ստացված առաջարկությունների հիման վրա նախագծերի փաթեթը վերամշակվել և սահմանված կարգով ներկայացվել է Ազգային ժողովին և Կառավարությանը օրենսդրական նախաձեռնությունների վերաբերյալ հետագա որոշումներ կայացնելու համար:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում կայացել է Հաշվեքննիչ պալատի ռազմավարական զարգացման ծրագրի իրականացման 2022 թվականի միջոցառումների ծրագրի վերաբերյալ արտաքին գործընկերների համակարգման հանդիպում, որին մասնակցել են Եվրոպական միության Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպության համատեղ SIGMA ծրագրի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID), ԱՄՆ աուդիտի բարձրագույն մարմնի (GAO), Շվեդիայի աուդիտի ազգային գրասենյակի, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ), ՀՀ-ում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (UNDP) գրասենյակի, ՀՀ

հաշվեքննիչ պալատի ներկայացուցիչներ և այլ միջազգային փորձագետներ: Հանդիպման ընթացքում ներկայացվել են Հաշվեքննիչ պալատի 2020-2023 թվականների ռազմավարական զարգացման ծրագրի և միջոցառումների պլանի իրականացման մշտադիտարկման արդյունքները, ինչպես նաև մոտ ապագայում նախատեսված միջոցառումները:

ՀՀ հաշվեքննիչ պալատի և Շվեդիայի ազգային աուդիտի գրասենյակի միջև կնքված փոխըմբռնման հուշագրի և 2021-2023 թվականների համատեղ համագործակցության ծրագրի շրջանակներում շվեդ գործընկերների աջակցությամբ մշակվել է Հաշվեքննիչ պալատում կատարողականի հաշվեքննության նոր մեթոդաբանություն, ինչպես նաև Երևանում անցկացվել են «Կատարողականի հաշվեքննություն» թեմայով աշխատաժողով ՀՀ հաշվեքննիչ պալատի ղեկավարության, ինչպես նաև եռօրյա վերապատրաստման դասընթացներ Հաշվեքննիչ պալատի հաշվեքննողների մասնակցությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում ԱՄՆ աուդիտի բարձրագույն մարմինը (GAO) և USAID-ն շարունակել են աջակցություն ցուցաբերել Հաշվեքննիչ պալատի մասնագիտական կարողությունների բարելավմանը՝ հատկապես որակի կառավարման համակարգի կատարելագործման, ինչպես նաև էթիկայի կանոնների և դրանց շարունակական մշտադիտարկման մեխանիզմների սահմանման ուղղություններով:

Հաշվեքննիչ պալատը խորացրել է համագործակցությունը ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (UNDP) գրասենյակի հետ, որի ժամանակակից խորհրդարան (MAP) ծրագրի աջակցությամբ Հաշվեքննիչ պալատին հաշվետու ժամանակատվածում տրամադրվել է փորձագիտական և տեխնիկական աջակցություն, ինչպես նաև զգալի օժանդակություն հաշվեքննողների՝ վերլուծական կարողությունների բարձրացմանը և աուդիտորի որակավորման դասընթացների մասնակցությանը:

Հաշվետու ժամանակահատվածում Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատի նախագահ Ալեքսեյ Կուդրինի գլխավորած պատվիրակությունը հյուրընկալվել էր Հաշվեքննիչ պալատում, որի շրջանակներում քննարկվել են երկկողմ և բազմակողմ համագործակցության վերաբերյալ հարցեր:

2022 թվականի ընթացքում Հաշվեքննիչ պալատի պատվիրակությունները մասնակցել են մի շարք միջազգային միջոցառումների, մասնավորապես.

- ՀՀ հաշվեքննիչ պալատի պատվիրակությունը մասնակցել է Բրազիլիայի ք. Ռիո դե Ժանեյրոյում կայացած Բարձրագույն հաշվեքննիչ մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) 24-րդ համագումարին,
- ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահը ՀՀ ԱԺ պաշտոնական պատվիրակության կազմում մասնակցել է «Բյուջետային գործընթացի առանձնահատկությունները և ավստրիական փորձի կիրառման հնարավորությունները» թեմայով Ավստրիայի խորհրդարան ճանաչողական այցին,

- ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահի գլխավորած պատվիրակությունը մասնակցել է Եվրասիական տնտեսական միության (այսուհետև՝ ԵԱՏՄ) անդամ պետությունների բարձրագույն հաշվեքննիչ մարմինների համատեղ կոլեգիայի առցանց նիստին,
- ՀՀ հաշվեքննիչ պալատի պատվիրակությունը մասնակցել է Շվեդիայի ք. Ստոքհոլմում կայացած EUROSAI (Եվրոպական բարձրագույն հաշվեքննիչ մարմինների) YES (Երիտասարդ առաջնորդների) 5-րդ համաժողովին:

ԵԱՏՄ ՀԱՄԱՏԵՂ ՀՍԿՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման, ԵԱՏՄ անդամ պետությունների բյուջեների փոխանցման վերաբերյալ

Ղեկավարվելով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 5-րդ հավելվածի արձանագրության 53-րդ կետի դրույթով, համատեղ հսկողության մասին բարձրագույն հաշվեքննիչ մարմինների կողմից հաստատված համաձայնագրով և միասնական ծրագրով՝ ԵԱՏՄ բարձրագույն հաշվեքննիչ մարմինների կողմից ԵԱՏՄ անդամ պետությունների լիազորված մարմիններում (գանձապետարաններում) հսկողություն է իրականացվել 2021 թվականին ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման, ԵԱՏՄ անդամ պետությունների բյուջեների փոխանցման ճշտության նկատմամբ:

2022 թվականի համատեղ հսկողական միջոցառման պատասխանատուն Ղրղզստանի բարձրագույն հաշվեքննիչ մարմին էր:

Հսկողական միջոցառումների ընթացքում յուրաքանչյուր օբյեկտում ԵԱՏՄ անդամ պետությունների բարձրագույն հաշվեքննիչ մարմինների կողմից հսկողական միջոցառումների վերաբերյալ կազմվել են համապատասխան ակտեր, որոնց ամփոփումից հետո կազմվել է ամփոփ հաշվետվություն, որը հաստատվել է ԵԱՏՄ անդամ պետությունների բարձրագույն հաշվեքննիչ մարմինների համատեղ կոլեգիայի նիստում, որն անցկացվել է տեսակոնֆերանսի միջոցով 2022 թվականի նոյեմբերի 28-ին:

ԵԱՏՄ մարմիններում (Եվրասիական տնտեսական հանձնաժողով և Եվրասիական միության դատարան) համատեղ արտաքին աուդիտ իրականացնելու մասին

Ղեկավարվելով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 22-րդ հոդվածով, Եվրասիական տնտեսական Բարձրագույն խորհրդի 2015 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 33 որոշմամբ հաստատված ԵԱՏՄ մարմիններում արտաքին աուդիտ իրականացնելու մասին Հիմնադրույթով՝ ԵԱՏՄ անդամ պետությունների բարձրագույն հաշվեքննիչ մարմինները Միության բյուջեի միջոցների ձևավորման, կառավարման ու տնօրինման, Միության գույքի և այլ

ակտիվների արդյունավետ օգտագործման նկատմամբ ԵԱՏՄ մարմիններում՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովում և Եվրասիական տնտեսական միության դատարանում, 2022 թվականին իրականացրել են համատեղ արտաքին աուդիտ:

Արտաքին աուդիտի (հսկողության) կազմակերպման մասով գործունեությունը ռոտացիոն կարգով համակարգվում է պետական պատասխանատու բարձրագույն հաշվեքննիչ մարմնի կողմից մեկ օրացուցային տարվա ընթացքում: 2022 թվականի համատեղ աուդիտի միջոցառումների պատասխանատու մարմինը Բելառուսի պետական հսկողության կոմիտեն էր:

Համատեղ միջոցառումների ընթացքում Եվրասիական տնտեսական հանձնաժողովում և ԵԱՏՄ դատարանում Եվրասիական տնտեսական միության 2021 թվականի բյուջեի կատարման հետագա աուդիտի, 2022 թվականի առաջին կիսամյակում ընթացիկ աուդիտի և 2023 թվականի ԵԱՏՄ բյուջեի ձևավորման նախնական աուդիտի իրականացման արդյունքներով կազմվել են հաշվետվություններ, որոնք ներկայացվել են Եվրասիական տնտեսական Բարձրագույն խորհրդի հաստատմանը:

ՍԵՎԾՈՎՅԱՆ ԱՎԱԶԱՆԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ԱՌԻԴՏՈՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հայաստանի, Ուկրաինայի, Մոլդովայի, Վրաստանի, Բուլղարիայի, Հունաստանի, Թուրքիայի բարձրագույն հաշվեքննիչ մարմիններն իրենց երկրներում Սևծովյան ավազանի երկրների անդրսահմանային համագործակցության ծրագրի շրջանակներում յուրաքանչյուրն իր երկրում ամենամյա հատուկ աուդիտներ է անցկացնում: Հաշվետու տարվա ընթացքում Հաշվեքննիչ պալատն, ակտիվ համագործակցելով միջազգային գործընկերների հետ, հաջողությամբ ավարտել է հսկողության գծով համակարգողի և ծրագրի ազգային մարմնի մոտ նախատեսված աուդիտները, որոնց արդյունքները ներառվել են Եվրոպական հանձնաժողովին ներկայացված աուդիտորական միասնական հաշվետվությունում (միասնական հաշվետվության պատասխանատուն է Ռումինիայի բարձրագույն հաշվեքննիչ մարմինը): Աուդիտորական առաջադրանքը ներառել է նաև նախորդ տարիներին ներկայացված առաջարկությունների կատարման ընթացքի վերաբերյալ հետհսկողության իրականացումը: Աուդիտորական աշխատանքների իրականացումը կրում է շարունակական բնույթ:

Հաշվեքննիչ պալատի 2022թ. գործունեության տարեկան ծրագրից 2023թ. գործունեության տարեկան ծրագիր տեղափոխված հաշվեքննությունների ցանկ³

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայություն. գրադվածության ծրագրի իրականացման գործընթաց (ՀՊ 2022թ. նոյեմբերի 24-ի թիվ 224-Լ որոշում),
2. ՀՀ առողջապահության նախարարություն. ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովում (ՀՊ 2022թ. նոյեմբերի 24-ի թիվ 224-Լ որոշում),
3. ՀՀ առողջապահության նախարարություն. մոր և մանկան առողջության պահպանում (ՀՊ 2022թ. դեկտեմբերի 16-ի թիվ 236-Լ որոշում):

Հաշվեքննիչ պալատի 2022թ. գործունեության տարեկան ծրագրի կասեցված հաշվեքննությունների ցանկ⁴

1. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն. պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում (ՀՊ 2022թ. հուլիսի 27-ի թիվ 161-Ա որոշում),
2. Գեղարքունիքի մարզպետարանի ֆինանսատնտեսական գործունեություն (ՀՊ 2022թ. սեպտեմբերի 20-ի թիվ 188-Ա որոշում),
3. Կապանի համայնքապետարանի ֆինանսատնտեսական գործունեություն (ՀՊ 2022թ. սեպտեմբերի 20-ի թիվ 189-Ա որոշում):

Հաշվեքննիչ պալատի 2022թ. գործունեության տարեկան ծրագրի ուժը կորցրած հաշվեքննությունների ցանկ⁵

1. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն. Գյումրու քաղաքային ճանապարհների վարկային և դրամաշնորհային ծրագիր (ՀՊ 2022թ. նոյեմբերի 24-ի թիվ 226-Ա որոշում):

³ Հիմքը՝ «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 4-րդ մաս

⁴ Հիմքը՝ «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մաս

⁵ Հիմքը՝ «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 3-րդ կետ

Համագործակցությունը ՀՀ գլխավոր դատախազության հետ⁶

Ը/Ը	Թեմա	Երբ է տրամադրվել	Հաշվեքննությունն ընդրկող ժամանակաշրջանը	Ծանոթություն
I. Հաշվեքննիչ պալատը տրամադրել է ՀՀ գլխավոր դատախազությանը				
1.	ՀՀ պետական եկամուտների կոմիտե	27. 10. 2022թ.	01. 01. 2022-30. 06. 2022թթ.	16.11.2022 թվականին նախաձեռնվել է քրեական վարույթ, գտնվում է նախաքննության փուլում:
2.	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտե	02. 03. 2022թ.	01. 01. 2018-31. 12. 2020թթ.	19.07.2022 թվականին նախաձեռնվել է քրեական վարույթ, որը 05. 08. 2022 թվականին միացվել է ՀՀ ՔԿ ՀԿԳ-ում իրականացվող վարույթին: Գտնվում է նախաքննության փուլում: Պետությանը պատճառված վնասի չափը կազմում է 76,000.0 հազ. դրամ:
3.	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտե	02. 03. 2022թ.	01. 01. 2018-31. 12. 2020թթ.	15.07.2022 թվականին նախաձեռնվել է քրեական վարույթ, գտնվում է նախաքննության փուլում: Պետությանը պատճառված վնասի չափը կազմում է 268,000.0 հազ. դրամ:
4.	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության	02. 03. 2022թ.	01. 01. 2018-31. 12. 2020թթ.	03.08.2022 թվականին նախաձեռնվել է քրեական վարույթ, գտնվում է

⁶ Աղյուսակի տեղեկատվությունը չի ներառում պետական գաղտնիք պարունակող հաշվեքննությունների վերաբերյալ տվյալներ

	պետական գույքի կառավարման կոմիտեում			նախաքննության փուլում: Պետությանը պատճառված վնասի չափը կազմում է 215,000.0 հազ. դրամ:
5.	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն («Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ)	02.08.2021թ.	01.01.2020-31.12.2020թթ.	23.05.2022 թվականին հարուցվել է քրեական վարույթ, գտնվում է նախաքննության փուլում:
II. Հաշվեքննիչ պալատը տրամադրել է ՀՀ գլխավոր դատախազության պահանջով				
1.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն («Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ)	09.07.2019թ.	01.01.2017-30.09.2018թթ.	26.11.2022 թվականին նախաձեռնվել է քրեական վարույթ, գտնվում է նախաքննության փուլում: Պետությանը պատճառված վնասի չափը կազմում է 135,724.5 հազ. դրամ:
2.	ՀՀ առողջապահության նախարարություն (Նոր կորոնավիրուսային համավարակով (COVID-19) պայմանավորված բյուջետային ծախսերի իրականացում)	14. 10. 2022թ.	01. 01. 2020-31. 12. 2020թթ.	23. 05. 2022 թվականին նախաձեռնվել է քրեական վարույթ: Քրեական վարույթից անջատվել են 11 քրեական վարույթներ, որոնք գտնվում են նախաքննության փուլում: Քրեական հետապնդում է իրականացվել 11 անձի նկատմամբ: Պետությանը պատճառված վնասի չափը նախնական հաշվարկով կազմում է 109,009.0 հազ. դրամ:
3.	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն (Նոր կորոնավիրուսային համավարակով (COVID-19) պայմանավորված բյուջետային ծախսերի իրականացում)	11. 05. 2022թ.	01. 01. 2020-31. 12. 2020թթ.	27.05.2022 թվականին հարուցվել է քրեական գործ, գտնվում է նախաքննության փուլում: Պետությանը պատճառված վնասի չափը կազմում է 23,000. 0 հազ. դրամ:

4.	<p>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Սոցիալական ապահովության ծառայություն»</p>	11. 12. 2019թ.	01. 01. 2017-31. 12. 2018թթ.	<p>13.09.2022 թվականին նախաձեռնվել է քրեական վարույթ, գտնվում է նախաքննության փուլում: Պետությանը պատճառված վնասի չափը կազմում է 8,208. 0 հազ. դրամ:</p>
5.	<p>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե</p>	29. 09. 2022թ.	01. 01. 2021-30. 12. 2021թթ.	<p>Ուսումնասիրության փուլում է</p>
6.	<p>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման վարկային և դրամաշնորհային ծրագրեր)</p>	10. 10. 2022թ.	01. 01. 2017-31. 12. 2019թթ.	<p>Ուսումնասիրության փուլում է</p>

2022 թվականի գործունեության ծրագրի 2-րդ մասով իրականացված հաշվեքննությունների ընթացիկ եզրակացությունների ամփոփագրեր

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄԲՈՒԼԱՏՈՐ-ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվեքննության օբյեկտը		
ՀՀ առողջապահության նախարարություն		
Հաշվեքննության կատարման ժամկետը		Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը
2021թ. մարտի 5-ից մինչև 2022թ. դեկտեմբերի 30-ը ներառյալ		2019թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ը
Հաշվեքննության առարկան		Հաշվեքննության մեթոդաբանությունը
Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայություններ		Կատարողականի հաշվեքննություն
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
2	3	2

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԴԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ ԽՄԲԵՐԻ ԱՆՁԱՆՑ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտը		
ՀՀ առողջապահության նախարարություն		
Հաշվեքննության կատարման ժամկետը		Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը
2021թ. մարտի 5-ից մինչև 2022թ. դեկտեմբերի 30-ը ներառյալ		2019թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ը
Հաշվեքննության առարկան		Հաշվեքննության մեթոդաբանությունը
Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն		Կատարողականի հաշվեքննություն
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ

2	-	1
---	---	---

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵՈՒՄ ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԱՄԱՎԱՐԱԿՈՎ (COVID-19) ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Հաշվեքննության օբյեկտը	
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	
Հաշվեքննության կատարման ժամկետը	Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը
2021թ. մայիսի 17-ից 2022թ. դեկտեմբերի 30-ը ներառյալ	2020թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը
Հաշվեքննության առարկան	Հաշվեքննության մեթոդաբանությունը
Նոր կորոնավիրուսային համավարակով (COVID-19) պայմանավորված բյուջետային ծախսերի իրականացում	Ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն
Հաշվեքննության կարծիք	
Հաշվեքննությամբ տրվել է «դրական եզրահանգում» կարծիք:	

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՆՏԱՌՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Հաշվեքննության օբյեկտը		
Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն		
Հաշվեքննության կատարման ժամկետը	Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	
2021 թվականի նոյեմբերի 22-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 30-ը ներառյալ	2019 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 30-ը	
Հաշվեքննության առարկան	Հաշվեքննության մեթոդաբանությունը	
Անտառօգտագործման գործընթաց	Կատարողականի հաշվեքննություն	
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
3	2	3

Համառոտ եզրակացություն

Ձեռն պահպանվել տնտեսման և ծախսային արդյունավետության սկզբունքները:

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄՈՒՏՔԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտը

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

Հաշվեքննության կատարման ժամկետը

2020 թվականի փետրվարի 10-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 30-ը

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը

2019 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը

Հաշվեքննության առարկան

Պետական բյուջեի մուտքերի ձևավորման կանոնակարգված գործունեություն

Հաշվեքննության մեթոդաբանությունը

Համապատասխանության հաշվեքննություն

Համակարգին միտված առաջարկություններ

3

Արդյունքին միտված առաջարկություններ

2

Խնդիրներին միտված առաջարկություններ

2

Հաշվեքննության կարծիք

Հաշվեքննությամբ տրվել է «դրական եզրահանգում» կարծիք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԹՎԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ (ԹՎԱՅՆԱՑՄԱՆ) ԳՈՐԾՆԹԱՑ

Հաշվեքննության օբյեկտը

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն

Հաշվեքննության կատարման ժամկետը

2022թ. հունիսի 1-ից մինչև 2023թ. փետրվարի 28-ը ներառյալ

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը

2021թ. հունվարի 1-ից մինչև 2022թ. նոյեմբերի 30-ը

Հաշվեքննության առարկան

Հաշվեքննության մեթոդաբանությունը

ՀՀ թվային փոխակերպման (թվայնացման) գործընթաց		Կատարողականի հաշվեքննություն			
Համակարգին միտված առաջարկություններ		Արդյունքին միտված առաջարկություններ		Խնդիրներին միտված առաջարկություններ	
12		9		3	
Համառոտ եզրակացություն					
Չի պահպանվել նպատակային արդյունավետության սկզբունքը					

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԷԼԵԿՏՐԱՀԱՂՈՐԴՄԱՆ ՑԱՆՑԻ ՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

Հաշվեքննության օբյեկտը					
Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն					
Հաշվեքննության կատարման ժամկետը			Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը		
2022 թվականի հունիսի 1-ից 2023թ. փետրվարի 28-ը ներառյալ			2018 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 30-ը		
Հաշվեքննության առարկան			Հաշվեքննության մեթոդաբանությունը		
Կովկասյան էլեկտրահաղորդման ցանցի վարկային և դրամաշնորհային ծրագրեր			Կատարողականի հաշվեքննություն		
Համակարգին միտված առաջարկություններ		Արդյունքին միտված առաջարկություններ		Խնդիրներին միտված առաջարկություններ	
3		4		-	
Համառոտ եզրակացություն					
Չեն պահպանվել ծախսային և նպատակային արդյունավետության սկզբունքները					

ԾԱՂԿԱԶՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտը

Ծաղկաձորի համայնքապետարան

Հաշվեքննության կատարման ժամկետը		Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը
2022 թվականի օգոստոսի 22-ից մինչև 2023 թվականի փետրվարի 28-ը		2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը
Հաշվեքննության առարկան		Հաշվեքննության մեթոդաբանությունը
2021 թվականի ֆինանսատնտեսական գործունեություն		Ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
-	-	2
Հաշվեքննության կարծիք		
Հաշվեքննությամբ տրվել է «դրական եզրահանգում» կարծիք:		

ՏԱՐԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՑԱՆՑԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

Հաշվեքննության օբյեկտը		
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն		
Հաշվեքննության կատարման ժամկետը		Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը
2020 թվականի հունիսի 8-ից մինչև 2023 թվականի փետրվարի 28-ը ներառյալ		2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը
Հաշվեքննության առարկան		Հաշվեքննության մեթոդաբանությունը
Ճանապարհային ցանցի բարելավման դրամաշնորհային և վարկային ծրագրեր		Համապատասխանության հաշվեքննություն
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
(թիվ)	(թիվ)	(թիվ)
-	3	5
Հաշվեքննության կարծիք		

Հաշվեքննությամբ տրվել է «ոչ լիարժեք եզրահանգում» կարծիք

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ
ՓՈԽԱՆՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Հաշվեքննության օբյեկտները

ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայություն

Հաշվեքննության կատարման ժամկետը

2022 թվականի հունվարի 3-ից մինչև 2022 թվականի սեպտեմբերի 30-ը

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը

2020 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 30-ը

Հաշվեքննության առարկան

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե որպես նվիրաբերություն փոխանցված միջոցների օգտագործում

Հաշվեքննության մեթոդաբանությունը

Համապատասխանության հաշվեքննություն

Հաշվեքննության կարծիք

Հաշվեքննությամբ տրվել է «դրական եզրահանգում» կարծիք